
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ

Դատական հայեցողությունը ցանկացած պետության իրավական համակարգին հատուկ և օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթ է: Յուրաքանչյուր դատավոր, իրավական խնդիր լուծելիս, առնչվում է օրենքով նախատեսված մի քանի լուծումների միջև ընտրություն կատարելու, գործի հանգամանքները գնահատելու, իրավական նորմը ընկալելու և մեկնաբանելու խնդրին:

Դատական հայեցողությունը իրավունքի պատմության ամենահին խնդիրներից է, որին հասարակական-քաղաքական ինստիտուտներն առնչվում են իրավաստեղծ գործունեության ընթացքում: Գերմանիայում 18-րդ դարի վերջերին դատական հայեցողության ինստիտուտը ձեռք էր բերել քաղաքական հնչեղություն: Դատական հայեցողության մասին նորմերը փաստացի հանվեցին 1794 թ. Պրուսիայի կանոնադրությունից: Տեղեկություններ կան, որ թագավորը անձամբ է այդ ծավալուն աշխատությունից հանել դատարանին հայեցողություն կիրառելու հնարավորություն ընձեռող հոդվածները: Մյուս կողմից, Ֆրանսիայի կայսրը, քրեական պատժի սպառնալիքով, պարտադրեց քաղաքացիական գործերով նյութական իրավունքի բացերի դեպքում կիրառել դատական հայեցողություն¹:

Դատական հայեցողության և դրա սահմանների վերաբերյալ բանավեճը արևմտյան իրավաբանական գրականության մեջ մեծ թափ ստացավ հատկապես XX դարի 30-ական թվականներին, որի պատճառներից մեկը մի կողմից իրավաբանական պոզիտիվիզմի՝ որպես իրավական կարգադրագրերի կառուցվածքը նկարագրող տեսության ազդեցության նվազումն էր, մյուս կողմից դատավորին՝ որպես օրենսդրի կամքը պարզապես կատարողի ընկալումը քննադատող ամերիկյան իրավաբանական ռեալիզմի տարածումը:

Արևմտյան իրավաբանների ուշադրության կենտրոնում էր երկու կարևոր հարց. մի կողմից փորձ էր արվում հիմնավորել դատական հայեցողության անհրաժեշտությունը, մյուս կողմից վիճարկվում էր դատական հայեցողության առկայությունը: Դատական հայեցողության քննադատության հիմքում ընկած էր այն գաղափարը, որ հայեցողության արդյունքում դատարանները ստեղծում են նորմեր, որոնց հիման վրա առաջանում են իրավունքներ և պարտականություններ, մինչդեռ դատավորներին քաղաքացիները չեն ընտրում, ուստի նրանք պետք է պարզապես արտացոլեն ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կամքը: Դատական հայեցողության քննադատների երկրորդ փաստարկը վերաբերում էր հայեցողական որոշումների ռետրոակտիվ բնույթին և իրավական որո-

¹ Տե՛ս **Звонок С. О.** О проблеме свободного судебного усмотрения в арбитражном процессе <http://www.asrv.ru/vestnik12.shtml>

շակիությանը: Պատարանների ստեղծած նոր նորմերը իրավունքներ և պարտականություններ են սահմանում *ex post facto*, ինչը կարող է վտանգել իրավաբանական որոշակիությունը²:

Իրավական համակարգում դատական հայեցողության վերաբերյալ հետաքրքրական են Հարթի և Դվորկինի գաղափարները³: Գ. Հարթը գտնում է, որ լեզվի բաց համակարգ հանդիսանալը, օրենսդրի կամքի անորոշությունը և փաստերի հարաբերական անտեսումը կարող են ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ հստակ չլինի կիրառման ենթակա նորմը (եթե *a* է, ապա դատավորը *պե՞տք է*, թե՞ *կարող է* կիրառել *b*-ն): Գ. Հարթն ընդունում է դատական հայեցողության հնարավորություն ընձեռող օրենսդրական բացերի առկայությունը:

Մինչդեռ Ռ. Դվորկինը գտնում է, որ իրավունքը ինքնաբավ համակարգ է, որտեղ դատավորը, ուսումնասիրելով նաև հասարակության բարոյական հիմքերը, կարող է գտնել ցանկացած գործը լուծելու ճիշտ տարբերակը: Ռ. Դվորկինի մոտեցման համաձայն՝ դատավորը գործը լուծելիս ղեկավարվում է ոչ միայն իրավական նորմերով, այլև կարող է գործի լուծումը փնտրել համապատասխան սկզբունքներում: Նա վիճարկում է Գ. Հարթի այն մոտեցումը, որ դատավորը բարդ գործեր լուծելիս օժտված է հայեցողությամբ: Ռ. Դվորկինը դատական հայեցողությունը հնարավոր է համարում, երբ դատավորը դատական ակտը կայացնում է սկզբունքներ կիրառելով, սակայն ժխտում է բարդ գործերի դեպքում իրավական չափորոշիչներով չսահմանափակված հայեցողությունը:

Ռ. Դվորկինը նշում է, որ դատավորը, դիտարկելով բոլոր կանոնները, սկզբունքները և չափորոշիչները, պետք է ունակ լինի գտնելու գործի լուծման ճիշտ տարբերակը: Նա իր փաստարկներում ներմուծում է իդեալական դատավորի կերպարը՝ այն համեմատելով գերմարդկային հնարավորություններով օժտված Հերկուլեսի հետ: Քանի որ իրավունքը կանոնների և սկզբունքների ինքնաբավ համակարգ է, ուստի իդեալական դատավորը բոլոր բարդ գործերով կարող է գտնել ճիշտ պատասխանը՝ վերլուծելով կիրառելի կանոնները և սկզբունքները: Հեղինակն ասվածը հիմնավորելու համար ներկայացնում է ելմերի գործը: Ըստ նշված գործի հանգամանքների՝ Պալմերը իր գույքը կտակել էր տվյալ գործով մեղադրյալ ավագ որդուն, սակայն հետագայում Պալմերը կրկին ամուսնացել էր: Հոր կողմից կտակի հնարավոր փոփոխությունը կանխելու և սեփականությունից զրկվելու վախից դրդված՝ մեղադրյալը սպանում է Պալմերին, որի համար դատապարտվում է ազատազրկման: Նշված գործով խնդիրն այն էր, թե արդյո՞ք դատապարտյալը իրավական առումով պետք է համարվի Պալմերի ժառանգը և կտակած գույքի նկատմամբ ձեռք բերի սեփականության իրավունք: Նյու Յորքի օրենսդրության համաձայն՝ այդ կտակը համարվում էր վավեր, և դատապարտյալը գույքի նկատմամբ պետք է ձեռք բերեր սե-

² Տե՛ս **Iglesias Vila M.** Facing Judicial Discretion. Kluwer Academic Publishers. 2001, էջ 2:

³ Տե՛ս **Харт Г. Л.** Понятие права. СПб., 2007, էջ 28, **Dworkin, Ronald.** Judicial Discretion. *The Journal of Philosophy*. Vol. 60, No. 21, American Philosophical Association, **Eastern Division**, Sixtieth Annual Meeting. (Oct. 10, 1963), էջ 624-638, **Smollett S.** Dworkin and Judicial Discretion. *Philosophy of Law*, April 1, 2002 <http://www.yellowpigs.net/philosophy/dworkin> (17.01.2011):

փականության իրավունք: Սակայն, վերջին հաշվով, գործը լուծվեց ի վնաս դատապարտյալի՝ հիմք ընդունելով այն սկզբունքը, որ ոչ ոք չպետք է հնարավորություն ունենա խաբեությամբ օգուտ ստանալու կամ սեփական սխալների հիման վրա առավելություններ ձեռք բերելու: Այս գործը մեջբերելով՝ հեղինակը ցույց է տալիս, որ դատավորը գործը ճիշտ լուծելու համար պետք է ուսումնասիրի հասարակությունում առկա բոլոր չափորոշիչները՝ կանոնները և սկզբունքները, որոնք բարոյական և քաղաքական մշակույթի տարրեր են և գոյություն ունեն անկախ իրավական ինստիտուտների կողմից դրանք ամրագրելուց:

Դվորկինի և Չարթի ուսմունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկու տեսաբաններն էլ, ըստ էության, հավասարապես ընդունում են դատական հայեցողության առկայությունը, պարզապես տարբերվում են հայեցողության սահմանների վերաբերյալ իրենց մոտեցումներով:

Ստորև կքննարկենք դատական հայեցողության տիրույթում դատական քաղաքականության դրսևորման և դրանց հարաբերակցության, «դատական հայեցողություն» հասկացության գիտական մշակվածության և օրենսդրական գործածության հարցերը, «դատական հայեցողություն» հասկացությունը և դրա նշանակությունը, դատական հայեցողության տեսակները:

Դատական քաղաքականության դրսևորումը դատական հայեցողության տիրույթում: Դատական քաղաքականությունը՝ որպես նպատակաուղղված գործունեություն, կարող է իրականացվել բացառապես դատական հայեցողության տիրույթում: Դատական քաղաքականության էությանը հատուկ է դատական հայեցողությունը: Դատական քաղաքականությունը գոյություն ունի այնքանով, որքանով որ դրա սուբյեկտներն օժտված են որոշակի հայեցողությամբ՝ իրավական նշանակության հարցի վերաբերյալ ընտրության հնարավորությամբ⁴:

Դատական քաղաքականության և հայեցողության սերտ կապը երբեմն որոշ իրավաբանների թույլ է տալիս նույնացնել այս հասկացությունները, սակայն, կարծում ենք, դրանց բացարձակ նույնացումն անթույլատրելի է, քանի որ դատական քաղաքականությունը և հայեցողությունը, սերտորեն փոխկապակցված լինելով հանդերձ, ունեն տարբերություններ:

Նախ, դատական քաղաքականությունը և դատական հայեցողությունը տարբերվում են ինստիտուցիոնալ հարթությունում: Դատական հայեցողությունը հատուկ է դատական իշխանության ինստիտուցիոնալ ողջ համակարգին՝ ՀՀ սահմանադրական դատարան, առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան և այլն, մինչդեռ դատական քաղաքականություն ձևավորելու իրավասությամբ օժտված են բարձր դատարանները (ՀՀ սահմանադրական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ արդարադատության խորհուրդ):

Այս իմաստով դատական քաղաքականություն ձևավորվում է բացառապես վերջնական դատական հայեցողության շրջանակներում՝ բարձր դատարանների կայացրած դատական ակտերում: Բանն այն է, որ բարձր դատարանի ակտերն ընդհանուր առմամբ ենթակա չեն վերանայման՝ բա-

⁴ Այս մասին մանրամասն տես՝ **Ա. Ղանբարյան** Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները, Եր., 2011, 208 էջ:

ցառությամբ նոր և նոր երևան եկած հանգամանքների առկայության դեպքերի: Մինչդեռ նախնական հայեցողությունը կիրառվում է ստորադաս դատարանների կողմից: Եթե նախնական դատական հայեցողության կիրառմամբ կայացված դատական ակտը չի բողոքարկվել վերադաս դատական ատյան և մտել է օրինական ուժի մեջ, ապա նույնիսկ այս դեպքում իրավական հարցի վերաբերյալ դրսևորված նախնական դատական հայեցողությունը չի կարող դիտարկվել դատական քաղաքականության տիրույթում, քանի որ ստորադաս դատարանների՝ հայեցողության կիրառմամբ կայացված դատական ակտերը չունեն նորմատիվ նշանակություն (բացառությամբ վարչական դատարանի՝ ենթաօրենսդրական ակտը օրենքին հակասող ճանաչելու ակտերի):

Երկրորդ, հայտնի է, որ իրավունքի կիրառումը բարդ գործընթաց է. այն բաղկացած է մի շարք փուլերից, որոնցից յուրաքանչյուրում առկա են դատական հայեցողության տարրեր: Այսպես.

- դատական հայեցողություն իրավակիրառ գործընթացի առաջին փուլում՝ իրավաբանական գործի փաստական հանգամանքները պարզելիս,

- դատական հայեցողություն իրավակիրառ գործընթացի երկրորդ փուլում, որտեղ դատական հայեցողությունն արտահայտվում է կիրառման ենթակա իրավական նորմի ընտրությամբ,

- դատական հայեցողություն իրավակիրառ գործընթացի երրորդ փուլում՝ իրավաբանական գործով որոշում կայացնելիս, որտեղ դատական հայեցողությունն արտահայտվում է իրավաբանական գործից բխող իրավաբանական հետևանքների ընտրությամբ:

Դատական քաղաքականությունն այնպիսի գործունեություն է, որն իրականացնում են բարձր դատարանները՝ արտահայտելով իրավական նշանակության այնպիսի հարցերի վերաբերյալ դիրքորոշում, որոնք ունեն հանրային նշանակություն և դուրս է կոնկրետ գործի շրջանակներից: Դատական քաղաքականությունը ճիշտ ձևավորելու համար իրավակիրառ գործունեության բոլոր փուլերն ունեն կարևոր նշանակություն, օրինակ՝ ապացույցների լրիվ և բազմակողմանի հավաքում, ճիշտ գնահատում և այլն, սակայն դատական քաղաքականությունը առկա է միայն իրավակիրառ գործընթացի իրավական հարթությունում՝ իրավական նորմերի ընտրություն, մեկնաբանություն, իրավական հակասությունների լուծում ու բացերի լրացում և այլն: Պատահական չէ, որ ՀՀ-ում բարձր դատարանները լուծում են հիմնականում իրավունքի հարցեր: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը լուծում է ՀՀ սահմանադրությամբ նախատեսված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը, ՀՀ վճռաբեկ դատարանն ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում շեշտել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավունքի դատարան լինելու մասին: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի 09. 04. 2007 թ. ՍԴՈ-690 որոշման 7-րդ կետում նշվում է.

«Վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոններն արդարացիորեն կարող են պարունակել միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթի բովանդակությամբ, կապված ոչ թե մասնավոր, այլ՝ «...ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերի»,

«...օրենքի միատեսակ մեկնաբանման», դատական գործերով փաստական առանձնահատուկ հանգամանքների, դրանց գնահատման խնդրի, նյութական և ընթացակարգային իրավանորմերի ճիշտ կիրառումն ապահովելու հետ»:

ՀՀ սահմանադրական դատարանի 22. 09. 2009 թ. ՍԴՈ-832 որոշման 9-րդ կետում նշվում է.

«ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանցից են՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որևէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին»:

Ուստի, եթե դատական հայեցողությունը կարող է դրսևորվել իրավակիրառ գործունեության բոլոր փուլերում, այդ թվում գործի փաստական հանգամանքների ապացուցման գործընթացում, ապա դատական քաղաքականությունը՝ բացառապես հանրային նշանակության իրավական հարցերի ոլորտում:

«Դատական հայեցողություն» հասկացության գիտական մշակվածությունը և օրենսդրական գործածությունը:

Դատական հայեցողության հարցերը գտնվել են եվրոպական և ամերիկյան իրավաբանների ուշադրության կենտրոնում, մշակվել են դատական հայեցողության իրավափիլիսոփայական հայեցակարգեր, ինչպես նաև հայեցողության տեսակների, գործնական անհրաժեշտության տեսական հիմքեր⁵: Դատական հայեցողության հարցերի տեսական հիմնադրույթներն արտացոլված են հատկապես Գ. Հարթի և Ռ. Դվորկինի իրավափիլիսոփայական հայեցակարգերում:

Խորհրդային իրավագիտությունում հայեցողության հարցերը ուսումնասիրվել են առավելապես վարչական մարմինների գործունեության տեսանկյունից⁶, իսկ դատական հայեցողությունը համալիր քննարկման առարկա չի դարձել: Ճիշտ է, խորհրդային քաղաքացիական դատավարության տեսության մեջ դիտարկվել են դատական հայեցողության հետ կապված առանձին հարցեր⁷, սակայն շատ խնդիրներ դուրս են մնացել գիտական քննարկումներից:

⁵ Տե՛ս **Rosemary Pattenden** Judicial Discretion and Criminal Litigation. Contributors: Clarendon Press. Place of Publication: Oxford. 1990, **Robert D. Cooter.**, **Tom Ginsburg** Comparative Judicial Discretion: An Empirical Test of Economic Models. *Robert Cooter* (1996). Available at: http://works.bepress.com/tom_ginsburg/4 (17.01.2011), **Kenneth Einar Himma**. Judicial Discretion and the Concept of Law. Oxford University Press. 1999, <http://ojls.oxfordjournals.org/content/19/1/71.full.pdf> (10.01.2011):

⁶ Տե՛ս **Дубовицкий В. Н.** Законность и усмотрение в советском государственном управлении. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 1981, **Соловей Ю. П.** Усмотрение в административной деятельности советской милиции. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 1982, **Тихомиров Ю. А.** Административная усмотрение и право. Ежегодник российского права. М., 2001:

⁷ Տե՛ս **Комиссаров К. И.** Судебное усмотрение в гражданском процессе // "Сов. государство и право", 1969, № 4, **Бонер А. Т.** Применение закона и судебное усмотрение // "Сов. государство и право", 1979, № 6, **Пашкевич П. Ф.** Закон и судебское усмотрение // "Сов. государство и право", 1982, № 1 և այլն:

Տեսական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական հայեցողության հետազոտությունն ընթացել է հիմնականում վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզման, ներքին համոզմունքի ձևավորման վրա ազդող գործոնների, դատավարական որոշումների՝ որպես իրավակիրառ մարմնի հայեցողության իրականացման միջոցի ուսումնասիրության ուղղությամբ:

Հետխորհրդային տարածաշրջանում դատական հայեցողության հարցերի քննարկումներն ակտիվացան հատկապես Ա. Բարակի՝ «Դատարանի հայեցողությունը» աշխատության թարգմանությունից հետո:

Ներկայումս դատական հայեցողությունը ուսումնասիրում են ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ դատավարական և նյութական իրավունքի մասնագետները: Դատական հայեցողությունը թեկնածուական ատենախոսությունների շրջանակներում համալիր հետազոտման է ենթարկվել հատկապես քաղաքացիական դատավարության մասնագետների կողմից⁸: Քրեական դատավարությունում ուսումնասիրվել են քննիչի և դատախազի հայեցողության համատեսական նշանակության մի շարք հարցեր⁹: Աշխատանքներ են տարվում նաև սահմանադրական դատավարությունում դատական հայեցողության ուսումնասիրության ուղղությամբ¹⁰: Դատական հայեցողությունը համալիր քննարկվել է նաև քաղաքացիական և քրեական իրավունքներում¹¹: Քրեական իրավունքում հատուկ ուշադրության են արժանացել պատժի նշանակման ոլորտում դատական հայեցողության հարցերը¹²: ՀՀ-ում դատական հայեցողության ոչ համատեսական, ոչ ճյուղային խնդիրները պատշաճ ուշադրության չեն արժանացել¹³:

ՀՀ իրավական-որոնողական շտեմարանների ուսումնասիրությունից պարզվում է, որ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների նորմատիվ-իրավական ակտերում «դատական հայեցողություն» հասկացությունը

⁸ Տե՛ս **Папкова О. А.** Судейское усмотрение в гражданском процессе. Дисс. канд. юрид. наук. М., 1997, **Абушенко Д. Т.** Судейское усмотрение в гражданском процессе. Дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 1998:

⁹ Տե՛ս **Ярославский А. Б.** Усмотрение следователя при расследовании уголовных дел. Дисс. канд. юрид. наук. Волгоград, 2001, **Огилец А. А.** Процессуальные, тактические и психологические аспекты усмотрения следователя. Автореф. дисс. канд. юрид. наук. Краснодар, 2005, **Марфицин П. Г.** Усмотрение следователя (уголовно-процессуальный аспект). Дисс. д-ра. юрид. наук. Омск, 2003, www.lawtech.agava.ru/pub/busled/gl.htm (12.01.2007), **Конярова Ж. К.** Дискреционные полномочия прокурора и проблемы их реализации на досудебных стадиях уголовного процесса. Автореф. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2008:

¹⁰ Տե՛ս **Кажлаев С. А.** Судебное усмотрение в деятельности конституционного суда РФ. Проблемы процессуального права. <http://subscribe.ru/archive/law.russia.advice.process-200402/20183932.html> (20.02.2004):

¹¹ Տե՛ս **Степин А. Б.** Судебное усмотрение в частном праве (Вопросы теории и практики). Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2003, **Грачева Ю. В.** Судейское усмотрение в уголовном праве. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2002, **Рарог А. И.** Усмотрение правоприменителя при квалификации преступлений // "Уголовное право", 2000, № 1:

¹² Տե՛ս **Севастьянов А. П.** Пределы судейского усмотрения при назначении наказания. Автореф. дисс. канд. юрид. наук. Красноярск, 2004, **Степин А. Б.** Пределы судебного усмотрения при назначении наказания за терроризм // "Право и безопасность", 2005, № 2 (15):

¹³ Բացառություն են կազմում այս թեմայով գրված առանձին գիտական հոդվածներ, (տե՛ս **Ա. Ղամբարյան**, Դատական հայեցողություն: «Իրավագիտության հարցեր», թիվ 2, 2005, էջ 68-76):

չի գործածվում: Մինչդեռ դատական իշխանության մարմինների ակտերում լայն տարածում ունի ոչ միայն «դատական հայեցողություն» հասկացությունը, այլև «պետության հայեցողություն»¹⁴, «օրենսդիր մարմնի հայեցողություն»¹⁵, «վարչական մարմնի հայեցողություն»¹⁶ հասկացությունները:

ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում օգտագործվում են «դատարանի հայեցողություն»¹⁷, «դատարանի հայեցողական լիազորություններ»¹⁸ հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում «դատական հայեցողություն» հասկացությունը գործածվում է հիմնականում պատժի նշանակման, ՀՀ քր. օր.-ի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելու¹⁹, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու²⁰, դատական ակտերի նախադատելիության²¹ և այլ հարցերի կապակցությամբ: ՀՀ արդարադատության խորհուրդը իր որոշումներում նույնպես անդրադարձել է դատարանի հայեցողության առանձին հարցերի²²:

«Դատական հայեցողություն» հասկացությունը և դրա նշանակությունը:

Հայեցողությունը ոչ հստակ հասկացություն է, որի իմաստը բացահայտվում է կոնկրետ նախադասության խորապատկերում: Իրավաբանական նյութերում «հայեցողություն» հասկացությունը բազմիմաստ նշանակությամբ գործածելը 1923 թ. որոշ մեկնաբանների առիթ տվեց առաջարկելու հրաժարվել հայեցողություն եզրույթն օգտագործելուց²³: Այնուամենայնիվ, ներկայումս և՛ արտասահմանյան, և՛ հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ և իրավական պրակտիկայում «հայեցողություն» հասկացությունը ունի լայն գործածություն:

Բացատրական բառարաններում «հայեցողություն» հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ 1. ներքին՝ մտավոր զննություն, դատողություն, 2. դատելը, դատողությամբ որոշելը, այս կամ այն կերպ ընտրելը՝ վճռելը՝ տնօրինելը (ըստ իր դատողության՝ կամքի), 3. նայվածք, հայացք²⁴: Մեկ այլ բառարանում հայեցողությունը բացատրվում է՝ դատողություն, ըստ իր կամքի ընտրություն անել²⁵: Իրավաբանական գրականության մեջ նույնպես որոշ հեղինակներ դատական հայեցողությունը մեկնաբանում են որպես մտավոր գործունեություն, որի շրջանակներում վերլուծվում են օրենսդրությամբ տրված հնարավորությունները²⁶:

¹⁴ ՀՀ սահմանադրական դատարանի 29. 01. 2008 թ. ՍԴՊ-731 որոշում, կետ 10:

¹⁵ ՀՀ սահմանադրական դատարանի 12. 10. 2010 թ. ՍԴՊ-920 որոշում, կետ 5:

¹⁶ ՀՀ վճռաբեկ դատարանի 30. 07. 2010 թ. որոշում:

¹⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 27. 05. 2008 թ. ՍԴՊ-754 որոշում, կետ 6:

¹⁸ ՀՀ սահմանադրական դատարանի 22. 09. 2009 թ. ՍԴՊ 832 որոշում, կետ 9:

¹⁹ ՀՀ վճռաբեկ դատարանի 17. 02. 2009 թ. որոշում, կետ 24:

²⁰ ՀՀ վճռաբեկ դատարանի 30. 04. 2009 թ. որոշում, կետ 23:

²¹ ՀՀ վճռաբեկ դատարանի 05. 02. 2010 թ. որոշում, կետ 12:

²² Տե՛ս ՀՀ արդարադատության խորհրդի 22. 10. 2010 թ. ԱԽ-18-Ո-18 որոշումը:

²³ Տե՛ս **Rosemary Pattenden** Judicial Discretion and Criminal Litigation. Contributors: Clarendon Press. Place of Publication: Oxford. 1990:

²⁴ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Ձ, Եր., 1976, էջ 811:

²⁵ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» 4 հատորով, (հատոր 3-րդ), Եր., 1974, էջ 283:

²⁶ Տե՛ս **Попаденко Е. В.** Альтернативные средства разрешения уголовно-правовых конфликтов в российском и зарубежном праве. Автореф. дисс. канд. юрид. наук. Краснодар, 2008, էջ 14:

Դատական հայեցողությունը քննարկվում է նաև դատարանի դեակրեցիոն լիազորությունների խորապատկերում: Դեակրեցիոն լիազորությունները իրավակիրառ մարմնի հնարավորությունն է ընդունելու այս կամ այն որոշումը՝ ղեկավարվելով նպատակահարմարությամբ: Կարծում ենք՝ դեակրեցիոն լիազորությունները և դատական հայեցողությունը չպետք է հակադրել: Բանն այն է, որ հայեցողությունը և դեակրեցիան, ըստ էության, նույնական հասկացություններ են: Լեզվաբանական առումով «դեակրեցիա» եզրույթը բացատրվում է որպես սեփական հայեցողությամբ գործող, իսկ դեակրեցիոն իշխանությունը՝ հանրային իշխանության մարմինների՝ սեփական հայեցողությամբ գործելու իրավունքը²⁷: Ինչպես նկատում ենք, դեակրեցիան բացատրվում է «հայեցողություն» եզրույթի միջոցով: Այս հասկացությունները նույնական են նաև իրավաբանական առումով, քանի որ և՛ հայեցողության, և՛ դեակրեցիայի հիմքում ընկած է նպատակահարմարությունը:

ՀՀ օրենսդրության մեջ դատական հայեցողության օրենսդրական բնորոշումը տրված չէ: Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի» 6 հոդվածում տրվում է հայեցողական լիազորությունների բնորոշումը. «Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը»:

Դատական հայեցողության օրենսդրական բնորոշման բացակայության պայմաններում իրավագիտության մեջ առկա են դրա տարբեր սահմանումներ, որոնք կարելի է համակարգել երեք խմբի:

Առաջին խմբի կողմնակիցները դատական հայեցողությունը ներկայացնում են որպես նշված գործունեության սուբյեկտիվ իրավունք կամ ազատություն: Այսպես, Դ. Չեչոտը դատական հայեցողությունը դիտում է որպես դատարանի ազատություն՝ համապատասխան որոշման ընտրության հարցում²⁸: Փաստորեն այս մոտեցման կողմնակիցները դատական հայեցողության էությունը բացահայտում են «իրավունք» կամ «ազատություն» հասկացությունների միջոցով:

Կարծում ենք՝ անթույլատրելի է դատական հայեցողությունը դիտարկել սուբյեկտիվ իրավունքի հարթությունում, քանի որ սուբյեկտիվ իրավունքն անձին տրված հնարավորությունն է բավարարելու մասնավոր շահերը: Ընդհանուր առմամբ, «սուբյեկտիվ իրավունքի» մոտեցումը կիրառելի չէ հանրային իշխանություն կրողների համար:

Հանրային մարմինների և դատական մարմինների հայեցողությունը տարբերվում է դատավարության մասնավոր շահեր ունեցող սուբյեկտների հայեցողությունից (մասնավոր հայեցողություն): Ի տարբերություն մասնավոր հայեցողության՝ հանրային հայեցողությունը մշտապես ենթարկվում է որոշակի վերահսկողության: Այսպես, դատարանը հայեցողական լիազորություններ իրականացնելիս գիտակցում է, որ օրենքով իրեն տրված ընտրությունը գտնվում է վերադաս դատական ատյանների հսկողության ներքո: Մինչդեռ մասնավոր սուբյեկտները որևէ մեկին հաշվետու չեն իրենց հայեցողության, ընտրության համար: Օրինակ՝ քրեա-

²⁷ Стен Лехин И. В., Петров Ф. Н. Словарь иностранных слов. М., 1955, т. 234:

²⁸ Стен Чечот Д. М. Административная юстиция (проблемы пременения). Л., 1979, т. 68:

կան դատավարությունում մեղադրյալը կարող է պաշտպանվել օրենքով չարգելված բոլոր միջոցներով, և եթե նրա ազատ հայեցողությամբ ընտրված պաշտպանության եղանակը չի հակասում օրենքի պահանջներին, ապա այն չի կարող դառնալ քննարկման առարկա: Մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործը հարուցվում է բացառապես տուժողի բողոքի հիման վրա, և վարույթը կարճվում է, եթե տուժողը հաշտվում է մեղադրյալի հետ: Քաղաքացիական դատավարությունում կողմերը ազատ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները: Այս առումով հայեցողությունը կարելի է դիտել որպես դատավարական միջոց, որով դատավարության մասնակիցները հնարավորություն են ստանում հասնելու իրենց նպատակներին²⁹:

Արդարադատության ոլորտում մասնավոր հայեցողությունը սերտորեն կապված է դատավարության դիսպոզիտիվության հետ, որն ընդհանուր առմամբ նշանակում է կողմերի ազատ հայեցողությունը՝ իրավունքների պաշտպանության ոլորտում ընտրելու վարքագծի համապատասխան տարբերակը³⁰: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում օգտագործվում է «դիսպոզիտիվություն» եզրույթը: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 28. 12. 2010 թ.-ի ՍԴՈ-931 որոշման 8-րդ կետում նշվում է.

«Դատական քննության արագացված կարգը հանդիսանում է քրեական դատավարությունում դիսպոզիտիվության դրսևորում: Իր հերթին, քրեական դատավարությունում դիսպոզիտիվությունը հանդիսանում է իրավական ազատության, հավասարության, դատավարության կողմերի՝ իրենց նյութական և դատավարական իրավունքները տնօրինելու ազատության դրսևորում: Դիսպոզիտիվության սուբյեկտները դատավարության կողմերն են՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերը»:

Զպետք է հավասարության նշան դնել նաև «ազատություն» և «հայեցողություն» հասկացությունների միջև, քանի որ իրավակիրառողը իր հայեցողությամբ որոշում կայացնելիս սահմանափակված է որոշակի ոլորտով և այդ սահմանափակված ոլորտում ընտրության համար սահմանված լրացուցիչ պայմաններով: Բացի այդ, իրավակիրառողը պետք է առաջնորդվի օրենքի ընդհանուր սկզբունքներով, նպատակներով, հասարակության զարգացման ընդհանուր օրենքներով: Նման իրավիճակներում «հայեցողություն» հասկացությունը ձեռք է բերում պայմանական և սահմանափակ բնույթ³¹:

²⁹ Стé Власова Н. Ю. Усмотрение: понятие и его роль в уголовном процессе // Проблемы эффективности правосудия. Статьи, комментарии, практика. Вып. 2. Белгород, 2007. էջ 4-12:

³⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Плешанов А. Г. Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. М., 2002, էջ 37, Рогова О. И. Пределы проявления диспозитивных признаков в уголовном судопроизводстве. Томск, 1994, էջ 41, Александров А. С. Диспозитивность в уголовном процессе. Автореф. дисс. канд. юрид. наук. Новгород, 1995, էջ 17, Масленникова Л. Н. Публичное и диспозитивное начала в уголовном судопроизводстве России. Автореф. д-ра юрид. наук. М., 2000, Ս. Ղամբարյան, Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները ՀՀ-ում, Եր., 2006, էջ 214, Ա. Վարդանյան, Քրեական գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման օրինականության և հիմնավորվածության ապահովումը նախնական քննության փուլում: Թեկ. ատենախոս. սեղմագիր, Եր., 2009:

³¹ Стé Рагор А. И., Грачева Ю. В. Понятие, основание, признаки и значение судейского усмотрения в уголовном праве // "Государство и право", 2001, № 11, էջ 93:

Առավել ընդունելի է այն հեղինակների դիրքորոշումը, ովքեր դատական հայեցողությունը բացահայտում են «դատարանի լիազորություն» կամ «հնարավորություն» հասկացությունների միջոցով: Օրինակ՝ Ա. Բարակը նշում է, որ հայեցողությունը իշխանությամբ օժտված անձի՝ երկու և ավելի այլընտրանքների միջև ընտրություն կատարելու լիազորությունն է, որտեղ այլընտրանքներից յուրաքանչյուրը օրինական է³²: Ըստ Կ. Կոնիսարովի՝ դատական հայեցողությունը դատարանին ընձեռված հնարավորությունն է, կոնկրետ պայմաններից ելնելով, ընդունելու իրավունքի վերաբերյալ այնպիսի որոշում, որի հնարավորությունը բխում է օրենքի ընդհանուր և հարաբերական որոշակի դրույթներից³³:

Երկրորդ դիրքորոշման կողմնակիցները «դատական հայեցողություն» հասկացության մեջ շեշտադրում են սուբյեկտիվ կողմը: Ըստ այս մոտեցման՝ դատական հայեցողությունը դատարանի կողմից իրավաբանական գործի լուծման ընտրությունն է, որի հիմքում ընկած է գործի հանգամանքների սուբյեկտիվ ընկալումը և իրավական նորմերի սուբյեկտիվ մեկնաբանությունը: Ն. Պոգորելովան դատական հայեցողության բնորոշման մեջ հատուկ առանձնացնում է դատավորի աշխարհայացքը, մասնագիտական փորձը և համոզմունքը՝ իրավական նորմում ամրագրված մի քանի լուծումներից մեկի ընտրության ժամանակ³⁴: Ներքին համոզմունքը մի դեպքում կարելի է դիտել որպես դատական հայեցողության արդյունք, որը վկայում է ճիշտ որոշում կայացնելու մասին դատավորի համոզվածության մասին, մյուս կողմից՝ որպես հնարավոր որոշում կայացնելու հիմք³⁵:

Դատական հայեցողությունը անկասկած սերտորեն կապված է դատավորի ներքին համոզմունքի, դատավորի հոգեբանական և ինտելեկտուալ գործունեության հետ, այն հայեցողության սուբյեկտիվ կողմի տարր է: Բանն այն է, որ դատական հայեցողության հիմքում ընկած է նպատակահարմարությունը, ինչը նշանակում է դատական իշխանության մարմինների՝ նաև ոչ ֆորմալ-իրավաբանական նկատառումներից ելնելու հնարավորությունը:

Երրորդ տեսակետի կողմնակիցները դատական հայեցողությունը ներկայացնում են որպես իրավակիրառ գործունեության յուրահատուկ տեսակ, որին բնորոշ է կոնկրետ իրավաբանական գործով լավագույն լուծումը գտնելու ինտելեկտուալ-կամային ուղղվածությունը: Ի դեպ, պետք է նշել, որ դատական հայեցողությունը որպես իրավակիրառ գործունեություն դիտարկելն ավելի ընդունելի մոտեցում է: Այսպես, իրավունքի ընդհանուր տեսության մեջ դատական հայեցողությունը ձևակերպվում է որպես իրավակիրառ գործունեության տարր, որն արտահայտվում է լիազորված սուբյեկտի կողմից կոնկրետ իրավաբանական գործով իրավունքի նորմով սահմանված, պատճառաբանված, օրինական և հիմնավորված որոշման ընտրությամբ³⁶: Օ. Պոպկովան, վերանայելով դատական հայեցողության նախկին

³² Стів Барак А. Судейское усмотрение. М., 1999, էջ 299:

³³ Стів Комиссаров К. И. Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. Свердловск, 1971, էջ 26:

³⁴ Стів Погорелова Н. С. Судейское усмотрение в производстве по делам об административных правонарушениях. Автореф. дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2005, էջ 12:

³⁵ Стів Горевој Е. Д. Внутреннее судейское убеждение в оценке доказательств по уголовным делам. М., 2008, էջ 45:

³⁶ Стів Берг Л. Н. Судебное усмотрение и его пределы (общетеоретический аспект). Автореф. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2008, էջ 9:

նուն տրված հասկացությունը, «Դատարանի հայեցողությունը» մենագրության մեջ այն բնորոշում է որպես իրավական նորմերով նախատեսված, դատավարական ձևով իրականացվող՝ դատարանի պատճառաբանված իրավակիրառ գործունեություն, որը դրսևորվում է իրավական հարցի լուծման տարբերակների ընտրությամբ և ունի ընդհանուր և հատուկ սահմաններ³⁷:

Քրեական իրավունքում դատավորի հայեցողությունը բնորոշվում է որպես դատավարական ձևով իրականացվող իրավակիրառ գործունեության առանձնահատուկ տեսակ, որը ենթադրում է քրեաիրավական նորմերով սահմանված դեպքերում դատավորին օրենքով նախատեսված սահմաններում լուծում ընտրելու իրավագործության տրամադրում՝ իր իրավագիտակցության և օրենսդրի կամքին համապատասխան, ելնելով իրավունքի սկզբունքներից, հանցագործության կատարման կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաև բարոյականության հիմքերից³⁸:

Դատական հայեցողությունը բնորոշելիս անհրաժեշտ է հիմք ընդունել դատական հայեցողության հետևյալ հատկանիշները.

1. դատական հայեցողությունը իրավակիրառ գործունեության ընթացքում և դատավարական ձևի շրջանակներում ընձեռված ընտրության հնարավորությունն է,

2. դատական հայեցողությունը պատճառաբանված և հիմնավորված գործունեություն է, որի վրա ազդեցություն ունեն դատավորի մասնագիտական աշխարհայացքը, գործի վերաբերյալ ներքին համոզմունքը,

3. դատական հայեցողությունը գտնվում է իրավասու մարմնի (օրինակ՝ ՀՀ արդարադատության խորհուրդ) կամ վերադաս դատական ատյանի (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի) վերահսկողության ներքո:

Դատական հայեցողություն երևույթի ընկալումը միանշանակ չէ ո՛չ տեսաբանների, ո՛չ էլ պրակտիկների շրջանում. մի դեպքում այն դիտվում է որպես օբյեկտիվ անհրաժեշտություն, որով ապահովվում են իրավունքի ճկունությունը և զարգացումը, մյուս կողմից՝ արդարադատության մասնակիցների և հասարակության համար ծայրահեղ վտանգավոր և անցանկալի երևույթ, քանի որ հայեցողություն կիրառելիս դատարանը կարող է թույլ տալ չարաշահումներ և վնասել օրենքով պաշտպանվող շահերը: Ասվածը վկայում է, որ դատական հայեցողությունը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր³⁹:

Կարծում ենք՝ պետք է ընդունել, որ դատական հայեցողությունը դատավարության վերջնական նպատակներին հասնելու կարևոր միջոց է: Դատական հայեցողության անհրաժեշտությունը և արժեքաբանական ներուժը ակներև են դառնում հատկապես սոցիալական վեճը կարգավորելու իրավական անհրաժեշտ բազայի բացակայության պայմաններում այն լուծելու իմպերատիվ պահանջի կատարման ժամանակ: Նման դեպքերում

³⁷ Ст'я Папкова О. А. Усмотрение суда. М., 2005, էջ 39:

³⁸ Ст'я Грачева Ю. В. Судейское усмотрение в уголовном праве. Автореф. дисс. канд. юрид. наук. М., 2002, էջ 30:

³⁹ Այս մասին մանրամասն տես **Подмосковный В. Д.** Правовая основа судебного усмотрения по российскому законодательству: вопросы теории и практики. Дисс. канд. юрид. наук. Волгоград, 2004, էջ 36-38:

դատական հայեցողությունը գործող իրավական նորմերի ստեղծման անհնարինությամբ պայմանավորված իրավաստեղծ գործունեության անկատարությունը վերացնելու միջոց է. այն թույլ է տալիս օպերատիվ արձագանքել սոցիալական կյանքի փոփոխություններին: Բացի այդ՝ հասարակական հարաբերությունների բազմազանությունը ոչ միշտ է օրենսդրին հնարավորություն տալիս դրանք կարգավորելու իրավունքի բացարձակ որոշակի նորմեր ընդունելու միջոցով:

Դատական հայեցողության դրական կողմերի հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ այն կարող է լինել իրավակիրառ սխալի պատճառ⁴⁰, ինչը պայմանավորված է հայեցողության սուբյեկտիվ բնույթով, անորոշության պայմաններում իրականացվող գնահատման և գործողությունների հարաբերական ազատությամբ:

Հարաբերական որոշակի դրույթները, գնահատողական հասկացությունները, օրենքի բացերը և հակասությունները իրավական ոլորտում կարող են առաջացնել նաև անորոշություն, որի պայմաններում հայեցողության հիման վրա որոշում ընդունելիս մեծանում է իրավունքի սուբյեկտների օրինական շահերին վնաս հասցնելու ռիսկը:

Գիտության մեջ ռիսկը բնորոշվում է երկու իմաստով՝ հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացման հավանականություն և անորոշության պայմաններում իրականացվող գործունեություն, որը կարող է առաջացնել այդ հետևանքները: Իրավակիրառ ոլորտում ռիսկը իրավասու մարմնի մասնագիտական գործունեության պարտադիր տարր է, օրենսդրության, իրավակարգի անբաժանելի հատկանիշ: Իրավակիրառ ռիսկը իրավակիրառ գործունեության ստեղծագործական ձև է, որը իրականացվում է անորոշության պայմաններում, կապված է իրավակիրառ որոշման ընդունման այլընտրանքի հետ, ինչը ստեղծում է օրինական շահերին վնաս հասցնելու սպառնալիք⁴¹: Այս իմաստով դատական հայեցողությունը կարելի է դիտել որպես ռիսկային գործունեություն:

Տեսության մեջ օգտագործվում է նաև «*չնորմավորված վարքագիծ*» հասկացությունը, որն առնչվում է հայեցողության և ռիսկի հետ: Ա. Կանիֆատովը «ոչ նորմատիվային վարքագիծ» հասկացությունը կապում է օրենսդրության բացերի, հողվածների հիպոթեզի, դիսպոզիցիայի և սանկցիայի ոչ միանշանակ մեկնաբանման և քրեադատավարական նորմերի ուղղակի խախտման հետ⁴²: Դատական հայեցողությունը որոշ դեպքերում կարելի է դիտել որպես չնորմավորված գործունեություն, այն իմաստով, որ

⁴⁰ Գրականության մեջ միասնական մոտեցում չկա իրավակիրառ սխալի էության վերաբերյալ: Հիմնականում առանձնացվում են իրավակիրառ ռիսկի վերաբերյալ երեք մոտեցումներ՝ *առաջին*՝ որպես օբյեկտիվորեն հակահրավակական արարք, *երկրորդ*՝ որպես բարեխիղճ մոլորության կամ անզգուշության հետևանք, *երրորդ*՝ որպես իրավական նորմից ցանկացած շեղում՝ անկախ անձի մեղավորությունից (մանրամասն տես **Мурсалимов К. Р.** Правоприменительные ошибки. Проблемы теории. Автореф. дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 1999, **Назаров А. Д.** Влияние следственных ошибок на ошибки суда. М., 2003, **Зайцев И. М.** Устранение судебных ошибок в гражданском процессе. Саратов, 1985):

⁴¹ Տես **Мамчун В. В.** Правоприменительный риск. Автореф. дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 1999, էջ 17:

⁴² Տես **Канифатов А. А.** Защита уголовного процесса от ненормативного поведения его участников. Автореф. дисс. канд. юрид. наук. Нижний Новгород, 2004, էջ 4:

դատական հայեցողություն կիրառվում է այն դեպքում, երբ իրավական խնդրի լուծման իրավական հիմքերը հստակ չեն կամ առհասարակ բացակայում են: Դատական հայեցողությունը, որպես չնորմավորված գործունեություն դիտելը չի նշանակում, որ այս գործունեությունն առհասարակ դուրս է իրավական կարգավորման շրջանակներից: Նույնիսկ անալոգիայի ձևով դրսևորվող դատական հայեցողությունն իրականացվում է իրավական որոշակի կարգավորման շրջանակներում:

Այսպիսով, դատական հայեցողությունը որպես ռիսկային և չնորմավորված գործունեություն դիտելը պայմանավորված է նշված իրավական կատեգորիաների աղբյուրների ընդհանրությամբ (օրենքի բացեր, հարաբերական որոշակի դրույթներ և այլն):

Դատական հայեցողության տեսակները: Իրավաբանական գրականության մեջ դատական հայեցողությունը դասակարգվում է տարբեր հիմքերով:

Արևմտյան գրականության մեջ լայն տարածում ունի Ռ. Դվորկինի առաջարկած «ուժեղ և թույլ հայեցողություն» բնորոշումը: «Թույլ» դատական հայեցողությունը դրսևորվում է իրավական նորմերի առկայության պայմաններում դատական ակտի կայացման գործընթացում: «Ուժեղ» դատական հայեցողության դեպքում դատարանը կապված չէ իշխանության մյուս քների սահմանած իրավական նորմերով: Հեղինակը գտնում է, որ ուժեղ հայեցողության կիրառմամբ կայացված դատական ակտը պետք է դառնա համապատասխան մարմնի պարտադիր քննարկման առարկա⁴³:

Ռ. Գուդինը առանձնացնում է ձևական և ոչ ձևական հայեցողությունները: «Ձևական» հայեցողությունն առկա է այն ժամանակ, երբ դրա կիրառումը բխում է իրավական նորմի բովանդակությունից: «Ոչ ձևական» հայեցողությունն առկա է այնպիսի իրավական նորմեր կիրառելիս, որոնց ձևակերպման լեզուն հստակ չէ: Նույն հեղինակն առանձնացնում է նախնական և վերջնական հայեցողություններ: «Նախնական» հայեցողությունն առկա է, երբ դատական ակտը վերադաս դատարանը կարող է վերանայել: «Վերջնական» դատական հայեցողությունը կապված է վերջնական դատական ակտերի հետ⁴⁴: Ռ. Գուդինի առաջարկած դասակարգումը ՀՀ իրավական համակարգի տեսանկյունից, կարծում ենք, գործնական նշանակություն չունի, քանի որ ցանկացած հայեցողություն այս կամ այն չափով բխում է իրավական նորմի բովանդակությունից: Նույնիսկ իրավունքի անալոգիայի հիման վրա իրականացվող հայեցողությունը պայմանավորված է իրավունքի սկզբունքների գնահատմամբ և կիրառմամբ: Ինչ վերաբերում է վերջնական և նախնական հայեցողությանը, ապա այս դասակարգումը, ինչպես նշվեց, դատական քաղաքականության և հայեցողության սահմանազատման առումով ունի տեսական կարևոր նշանակություն:

Ռ. Պատենդեն, վերլուծելով արտասահմանյան տեսական գրականության մեջ առկա մոտեցումները, առանձնացնում է դատական հայեցողության չորս տեսակ՝ «բացահայտ» հայեցողություն, «թաքնված» հայեցողություն,

⁴³ Տե՛ս **Dworkin R. M.** Taking rights seriously. Cambridge, Mass.: Harvard University Press, 1977, էջ 32:

⁴⁴ Տե՛ս **Goodin R. E.** Welfare, rights and discretion. Oxford Journal of legal Studies. 1986. 6(3) էջ 236, Մեջբերումն ըստ՝ **О. А. Папкова** Усмотрение суда. М., 2005, էջ 16:

«շեղվող» հայեցողություն և «փաստերի» հայեցողություն: «Բացահայտ» հայեցողությունն առկա է, երբ ամրագրված նորմի հիման վրա որոշում կայացնելու փոխարեն (եթե *a* է, ապա դատավորը *պետք է* կիրառի *b*-ն) դատավորը իրավասու է ընտրելու այլընտրանքային գործողություններից մեկը (եթե *a* է, ապա դատավորը *կարող է* կիրառել *b*-ն, կամ *c*-ն): «Շեղվող» հայեցողություն ասելով հասկացվում է դատարանի հնարավորությունը՝ առանց պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի անտեսելու իրավական նորմերը: «Շեղվող» հայեցողությունը, ըստ հեղինակի, նման է Ռ. Դվորկինի առանձնացրած «ուժեղ» հայեցողությանը, երբ դատավորը կաշկանդված չէ իրավական նորմերով: «Թաքնված» հայեցողությունն առկա է ոչ հստակ հասկացությունների (օրինակ՝ ողջամիտ, անհրաժեշտ, արդար) գնահատման ժամանակ: «Փաստերի» հայեցողությունը դրսևորվում է փաստերը պարզելու և գնահատելու ժամանակ⁴⁵: Նշված դասակարգումը խոցելի է այն առումով, որ բացակայում է դասակարգման միասնական հիմքը, ուստի այն կարելի է համարել հայեցողության առանձին տեսակների պարզ թվարկում:

Գերմանացի իրավաբաններն առանձնացնում են հայեցողության երկու տեսակ՝ «պարզ» հայեցողություն, երբ օրենքով սահմանված են բոլոր հնարավոր որոշումների տարբերակները, և «նպատակային» հայեցողություն, երբ գործում է ոչ թե «եթե - ապա» իրավական կառուցվածք ունեցող նորմերում, այլ երբ պետական մարմնի առջև դրված են կոնկրետ նպատակներ, և այդ նպատակներին հասնելու համար նրան տրված է որոշումներ ընդունելու որոշակի ազատություն⁴⁶:

Վերլուծելով իրավակիրառ հարաբերությունների նյութական-դատավարական բնույթի երկակիությունը՝ կարելի է առանձնացնել դատական հայեցողության հետևյալ տեսակները՝ նյութական իրավունքի նորմեր կիրառելիս ծագող դատական հայեցողություն և դատավարական իրավունքի նորմեր կիրառելիս ծագող դատական հայեցողություն: Նշված դասակարգման գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դատական հայեցողության առանձին տեսակների կիրառումը նյութական իրավունքում արգելվում է, մինչդեռ դատավարական իրավունքում թույլատրվում է, օրինակ՝ այս իմաստով պետք է միմյանցից տարբերակել նյութական ու դատավարական օրենքի և իրավունքի անալոգիայի հիման վրա կիրառվող հայեցողությունը:

Տեսության մեջ հայեցողությունը դասակարգվում է այլընտրանքային և դեսկրեցիոն հայեցողության: «Այլընտրանքային» հայեցողության ժամանակ իրավակիրառ մարմինը կարող է ընտրել օրենքով նախատեսված մի քանի տարբերակներից մեկը: «Դեսկրեցիոն» հայեցողության դեպքում որոշում կայացնելու հստակ հիմքեր օրենքով սահմանված չեն, և իրավակիրառ մարմինը, ելնելով նպատակահարմարության, արդարության վերաբերյալ սեփական պատկերացումներից, ինքն է որոշում այդ հիմքերը⁴⁷:

⁴⁵ Տե՛ս **Rosemary Pattenden** *Judicial Discretion and Criminal Litigation*. Contributors: Clarendon Press. Place of Publication: Oxford. 1990:

⁴⁶ Տե՛ս **Рихтер И., Шупперт Г.** Судебная практика по административному праву. М., 2000, էջ 76:

⁴⁷ Տե՛ս **Смирнов А. В., Манукян А. Г.** Толкование норм права. Учебно-практическое пособие. М., 2008, էջ 109:

Գրականության մեջ նշվում է հայեցողության ամրագրման երեք եղանակ՝ 1. պարզ մատնանշում, երբ օրենսդիրը օգտագործում է «կամ» շաղկապը, և կամ՝ «կարող է», «իրավունք ունի» հասկացությունները, 2. օգտագործում է գնահատողական հասկացություններ, 3. համակցված տարբերակը⁴⁸: Որոշ դեպքերում առանձնացվում է՝ 1. իրավիճակային հայեցողություն, երբ օրենսդրությունը իրավակիրառողին հնարավորություն է տալիս, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, գործել հայեցողությամբ, 2. հայեցողություն հիմնված գնահատողական հասկացությունների վրա, 3. հայեցողություն իրավունքի և օրենքի անալոգիա կիրառելիս⁴⁹:

Դատական հայեցողության դասակարգման վերաբերյալ վերը նշված մոտեցումների վերլուծության հիման վրա, կարծում ենք, տեսագործական առումով առավել ընդունելի է դատական հայեցողությունը դասակարգել ըստ ծագման աղբյուրի: Ըստ այդմ՝ դատական հայեցողությունները լինում են՝

1. *հարաբերական որոշակի նորմերի հիման վրա առաջացող դատական հայեցողություն,*

2. *իրավունքի և օրենքի անալոգիայի հիման վրա առաջացող դատական հայեցողություն,*

3. *գնահատողական իրավական հասկացությունների հիման վրա առաջացող դատական հայեցողություն,*

4. *կոլիզիոն նորմերի հիման վրա առաջացող դատական հայեցողություն:* Այսպիսով, կարելի է եզրակացնել.

1. Դատական հայեցողության և դատական քաղաքականության փոխհարաբերակցությունը քննարկելիս պետք է նկատի ունենալ.

ա) *դատական քաղաքականությունը դրսևորվում է միայն բարձր դատարանների կողմից վերջնական հայեցողության կիրառման ժամանակ, մինչդեռ դատական հայեցողություն կիրառելու հնարավորությունը հատուկ է դատական իշխանության մարմինների բոլոր ատյաններին (ինստիտուցիոնալ տեսանկյուն),*

բ) *դատական քաղաքականությունը իրականացվում է բարձր դատարանների կողմից իրավական նշանակության այնպիսի հարցերի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելով, որոնք ունեն հանրային նշանակություն և դուրս է կոնկրետ գործի շրջանակներից, մինչդեռ դատական հայեցողությունը կարող է առկա լինել իրավակիրառ գործունեության բոլոր փուլերում, այդ թվում ապացույցների հավաքման, գնահատման ոլորտում (գործառնական տեսանկյուն):*

2. Դատական հայեցողությունը դատավարական ձևի շրջանակներում գործի հանգամանքների, դատավորի մասնագիտական աշխարհայացքի և ներքին համոզմունքի հիման վրա ձևավորվող պատճառաբանված ընտրության հնարավորությունն է:

⁴⁸ Տե՛ս **Попаденко Е. В.** Альтернативные средства разрешения уголовно-правовых конфликтов в российском и зарубежном праве. Автореф. дисс. канд. юрид. наук. Краснодар, 2008, էջ 14:

⁴⁹ Տե՛ս **Минникес И. А.** Индивидуальное правовое регулирование (теоретико-правовой анализ). Автореф. дисс. д-ра. юрид. наук. Екатеринбург, 2009, էջ 15:

3. Դատական հայեցողությունը իրավունքի ճկունության և զարգացման տեսանկյունից ունի արժեքաբանական մեծ նշանակություն: Մինչդեռ ժամանակ, դատական հայեցողությունը, լինելով ռիսկային, իսկ առանձին դեպքերում՝ չնորմավորված գործունեություն, կարող է դառնալ իրավակիրառ սխալի պատճառ:

4. Ըստ ծագման աղբյուրի՝ կարելի է առանձնացնել հարաբերական որոշակի նորմերի, կոլիզիոն նորմերի, գնահատողական իրավական հասկացությունների և իրավունքի ու օրենքի անալոգիայի հիման վրա առաջացող դատական հայեցողություններ:

АРТУР ГАМБАРЯН – Судейское усмотрение в сфере судебной политики. – В статье рассматривается соотношение судейского усмотрения с судебной политикой и приводятся следующие точки различия двух этих понятий:

1. судебная политика проявляется только при применении окончательного усмотрения высшими судебными инстанциями, тогда как судейское усмотрение присуще всем судебным инстанциям (институциональный подход);

2. судебную политику реализуют высшие судебные инстанции, занимая позиции по вопросам, которые имеют общественную значимость. Эта позиция выходит за рамки конкретного дела, тогда как судейское усмотрение проявляется на всех стадиях правоприменительного процесса, в том числе и при собирании и оценке доказательств (функциональный подход).

Судейское усмотрение – это выбор, который в рамках процессуальной формы обосновывается обстоятельствами дела, профессиональным мировоззрением судьи и его внутренним убеждением. Оно имеет большое аксиологическое значение и может послужить причиной ошибки в правоприменительной практике. Классификация судейского усмотрения по источнику происхождения (судейское усмотрение, возникающее на основе относительно-определенных или коллизионных правовых норм и на основе аналогии права и закона) имеет важное практическое и теоретическое значение.

ARTUR GHAMBARYAN – Judicial discretion in the scope of judicial policy. – The author discusses issues relating to the manifestation of judicial policy in the ambit of judicial discretion, as well as the problem of interrelation of these two concepts, the academic completeness and legislative utilization of the concept of "judicial discretion", the content and meaning, as well as the types of judicial discretion.

The author has conducted an extensive research of literature, including works of several European and American scholars in regard to judicial discretion. The article discusses also the main aspects of Hart's and Dworkin's views on judicial discretion.

Discussing the relationship of judicial discretion with judicial policy, the author enshrines the following aspects of differentiating the mentioned two concepts:

a. the judicial policy is revealed only when exercising the final judicial discretion by the highest judicial instances, while the feature of judicial discretion is pertinent to every judicial instance (institutional approach);

b. the judicial policy is exercised by the highest judicial institutions through expressing positions on such legal issues, which have public significance. This position exceeds the boundaries of the certain case, while judicial discretion exists at all the stages of

law enforcement, including the stage of collection and assessment of evidence (functional approach);

The author defines "judicial discretion" as the reasoned opportunity of choice, which is being formed based on the facts of the case, professional outlook and inner persuasion of the judge. The axiological significance of judicial discretion from the point of view of flexibility and development of law is very high. At the same time due to the risky nature and the fact of not being regulated in some cases, judicial discretion hence can be the cause for a mistake when applying the law.

Examining several approaches to the issue of classification of judicial discretion, the author concludes that the classification of judicial discretion based on the source of origin has important practical and theoretical meaning. Based on this criterion the following types of judicial discretion need to be differentiated: judicial discretion based on relatively certain or collision norms, evaluative concepts and the analogy of the law and statute.